ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲՏԱՆ-ԴՄ-2024/02

ք. Երևան 27 05 , 2024թ.

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Դավիթ Գասպարյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Բութքամփ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Նարեկ Ասլիկյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշումը (այսուհետ նաև՝ որոշում) և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյուանբերության նախարարի 2024 թվականի մարտի 1-ի N 365-Ա հրամանը (այսուհետ՝ Հրաման), «Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն» միջոցառման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Ծրագրի իրականացման շրջանակներում Կազմակերպությանը հատկացնել 30.000.000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ գումար (ներառյալ բոլոր հարկերը), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել, Ծրագրով նախատեսված դասընթացները կազմակերպել պետական ֆինանսավորմամբ՝ համաձայն Պայմանագրի հավելված 1-ի և Պայմանագրի հավելված 1-ով սահմանված կարգի:

1.2. Կազմակերպության կողմից նշված թվի՝ 300 մասնակցից պակաս մասնակցություն ապահովելու դեպքում, կողմերի միջև կկատարվի վերահաշվարկ: Վերահաշվարկի արդյունքում ավելացված գումարները այդ մասին Նախարարությունից ծանուցում ստանալուց հետո 5-օրյա ժամկետում պետք է վերադարձվեն ՀՀ պետական բյուջե:

1.3. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի հավելված 1-ում: Դասընթացները Կազմակերպության կողմից կազմակերպվելու են համաձայն հավելված 5-ի:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունը իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, պահանջել Կազմակերպությունից և ստանալ դասընթացի (դասընթացների) տեսաձայնագրությունները:

2.1.2. Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ պատշաճ չի իրականացնում Ծրագիրը կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը խախտել է Ծրագրով և Պայմանագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. Իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով և Պայմանագրով սահմանված պահանջներին և պայմաններին:

2.1.4. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում՝ պահանջել իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում պահանջել վճարել իրեն Պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարի 30% կանխավճարը, իսկ մնացած գումարը, համապատասխան Պայմանագրի 1.1. և 1.2. կետերի, միջոցառման կատարումը հավաստող հաշվետվությունը Նախարարության կողմից ընդունվելու դեպքում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը:

2.2.2 Նախարարության կողմից գումարները չվճարելու դեպքում՝ միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները, բացառությամբ ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԸ:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1 Անհրաժեշտության դեպքում Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման շրջանակում, Կազմակերպությանը ցուցաբերել խորհրդատվական աջակցություն:

2.3.2. Միջոցառումների մասին ներկայացված կատարողական ամփոփիչ հաշվետվության վերաբերյալ համապատասխան դրական եզրակացություն ընդունել՝ այն ստանալու օրվանից մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե իրականացված միջոցառումները համապատասխանում են Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել Ծրագրի շրջանակներում Նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում:

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և/կամ Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2.4.3. Կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

2.4.4. Նախարարությանը անհապաղ տեղեկացնել միջոցառումների իրականացման ռիսկերի կամ իրականացման անհնարինության վերաբերյալ:

2.4.5. Պայմանագրով նախատեսված միջոցառումները կատարել՝ չխախտելով այլ անձանց իրավունքները:

2.4.6. Տեսաձայնագրել դասընթացները և տեսաձայնագրությունը, ըստ պահանջի, տրամադրել Նախարարությանը:

2.4.7. Վարել դասամատյան, որը պարունակում է տեղեկատվություն սովորողների հաճախելիության մասին և, ըստ պահանջի, ներկայացնել Նախարարություն:

2.4.8. Նախարարության պահանջով 10 աշխատանքային օրվա ընթացքում պաշտոնական գրությամբ Նախարարություն ներկայացնել Պայմանագրով նախատեսված թվով մասնակիցների ֆինանսական հաշվետվություն և իրականացված միջոցառումների վերաբերյալ Կազմակերպության կատարողական ֆինանսական հաշվետվություն՝ ըստ Նախարարության կողմից ներկայացված ձևաչափի և Հավելված 6-ի:

2.4.9. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը:

2.4.10. Իրականացման ընթացքում Նախարարության կողմից անհամապատասխանություններ արձանագրելու, ինչպես նաև ամփոփիչ հաշվետվությունը Նախարարության կողմից չընդունելու դեպքում՝ Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.11. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.12. Պայմանագրի ուժի մեջ մտնելուց 20-օրյա ժամկետում Նախարարություն ներկայացնել դասընթացների մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն ձևաչափ 1-ի:

2.4.13. Դասընթացները սկսել Պայմանագրի ուժի մեջ մտնելուց առավելագույնը 15 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.14. Նախարարություն ներկայացնել Պայմանագրով նախատեսված (ավարտած/իրականացված) միջոցառման վերաբերյալ Կազմակերպության կատարողական ամփոփիչ ֆինանսական հաշվետվությունները՝ համապատասխան հիմնավորող փաստաթղթերով՝ Նախարարության կողմից ներկայացված ձևաչափով՝ միջոցառման ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում պաշտոնական գրության տեսքով, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում, և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.15. Դրամաշնորհի շրջանակներում ստացված դրամական միջոցները բաշխել առանձնացված բանկային հաշվի (հաշվեհամարի) միջոցով:

2.4.16 Ծրագիրը իրականացնել մինչև 2024թ. հոկտեմբերի 1-ը ներառյալ:

3. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է Նախարարության և Կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կազմակերպությունը «armeps» էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) Նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում Կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

3.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Նախարարությունը պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և «armeps» էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

3.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում «armeps» էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Նախարարությունը չի ընդունում պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Նախարարությունը «armeps» էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում Նախարարությունը Կազմակերպությանը տրամադրում է Պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարի 30 %-ը որպես կանխավճար, իսկ մնացած գումարի վճարումը իրականացվում է 2.2.1 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

4.2. Կազմակերպությանը մնացած վճարումները կատարվում են Պայմանագրով սահմանված ամփոփիչ հաշվետվություններն ընդունելուց, Նախարարության և Կազմակերպության միջև Պայմանագրի արդյունքն ընդունելու վերաբերյալ հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ժամկետներում: Պայմանագրի 1.1 կետում նշված գումարից՝ 9.000.000 (ինը միլիոն) ՀՀ դրամը, լիազորված պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է նաև հանձնման-ընդունման ակտերի հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով

5. Մոնիթորինգը

5.1. Նախարարությունը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

5.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

5.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

5.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

5.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում՝ Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում է և կարող է հաշվանցել Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6.2.Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում Ծրագրով նախատեսված պարտավորությունների՝ պայմանագրով նախատեսված պահանջները չպահպանելու համար:

6.3 Պայմանագրի N 1 հավելվածում նշված դրույթների յուրաքանչյուր անհամապատասխանության դեպքում Կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև սույն պայմանագրով սահմանված ժամկետում արդյունքը հանձնելու, սակայն Նախարարության կողմից այն չընդունվելու դեպքում:

6.4. Պայմանագրով նախատեսված Ծրագրի ժամկետը խախտելու դեպքում Կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված արդյունքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5. Պայմանագրի 6.3 և 6.4 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Կազմակերպության վճարման ենթակա գումարների հետ:

6.6. Նախարարության կողմից պայմանագրի 4.1. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Կազմակերպության նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.7. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.8. Համատեղ գործունեության (կոնսորցիումի) դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում՝ կոնսորցիումի անդամի՝ կոնսորցիումից դուրս գալու

դեպքում կոնսորցիումի հետ Նախարարության կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է, և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7.2. Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների Նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, Նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային Ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 5):

9.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Նախարարությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ Նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ www.hti.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը Նախարարությունը այն ուղարկվում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	«Բութքամփ» ՍՊԸ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,	ՀՀ, ք. Երեւան, Դավթաշեն 2թ. 47, բն. 2
ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00238961
Հ/Հ 900011031912	Հ/h 1570073681500100
ՀՎՀՀ 02565518	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝ Նարեկ Ասլիկյան
Դավիթ Գասպարյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 1
27.05.2024-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/02 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման					
	Անվանումը	**Նկարագիրը**	**Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները**	**Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**Միջոցառման իրականացման վերջնաժամկետը**	**Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)**
1.	**«Մասնայական ուսուցում»**	Մշակել կադրերի վերապատրաստման համապատասխան ծրագրեր և իրականացնել վերապատրաստման դասընթացներ, կազմակերպել և իրականացնել 300 մասնակիցների համար դասընթաց: Միջոցառումը նախատեսված է իրականացնել 300 մասնակցի համար ՀՀ մարզերից, ինչի համար կպահանջվի 30 միլիոն ՀՀ դրամ: Յուրաքանչյուր դասընթաց պետք է բաղկացած լինի առնվազն 24 դասաժամից: Միջոցառումը պետք է իրականացվի յուրաքանչյուր մարզում ուսումնական կենտրոնի առկայությամբ (համապատասխան	Ապահովել միաժամանակ մինչև 20 ուսանողի արդյունավետ կրթությունը (տարբեր լսարաններում), ինչպես նաև վերահսկել բոլոր ուսանողների ընթացիկ առաջադիմությունը: Ապահովել առավելագույնը 40 մասնակցին մեկ ադմինիստրատիվ մասնագետով և առնվազն մեկ դասախոսով:	Կազմակերպության կողմից մշակված և ՀՀ ԲՏԱ նախարարության կողմից հաստատված ծրագրով վերապատրաստված 300 մասնագետ:	Մինչև 2024թ. հոկտեմբերի 1-ը	Առավելագույնը՝ 30,000,000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ: Ընկերությանը կտրամադրվի բյուջեի 30%-ի չափով կանխավճար, իսկ մնացած գումարը կտրամադրվի կազմակերպության կողմից ներկայացված աշխատանքների կատարումը հավաստող հաշվետվությունը նախարարության կողմից ընդունման դեպքում: Դասընթացներն իրականացվում են պետական ֆինանսավորմամբ:

		սարքավորումներով և տեխնիկայով հագեցած լսարան): Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո բոլոր դասընթացները անհրաժեշտ է սկսել և ավարտել մինչև 2024 թվականի հոկտեմբերի 1-ը: Կկազմակերպվի դրամաշնորհային մրցույթ, որում կընդգրկվեն << Գեղարքունիքի, << Սյունիքի և << Վայոց Ձորի մարզերը: Յուրաքանչյուր մարզում ծրագրի մասնակից սովորողների նվազագույն թիվը 50 է: Դասընթացների ավարտից հետո սովորողները պետք է ունենան նավազագույն պարտադիր գիտելիքներ ծրագրավորման ուղղությունների (Back end, Front end, դրանց տարբերությունները, յուրաքանչյուր ուղղությամբ առնվազն մեկ ծրագրավորման լեզվի բազային իմացություն), դիզայներական ծրագրերի (Corel Draw կամ Adobe (Photoshop կամ Express կամ Illustrator կամ Figma և/կամ այլնի վերաբերյալ բազային իմացություն), մեքենայական ուսուցման մոդելների (Reinforced, supervised, and unsupervised, դրանց տարբերությունները և առանձնահատկությունները, մաթեմատիկայի գործածություն) և արդի տեխնոլոգիաների (այդ թվում՝ քվանտային ծրագրավորման, բլոկչեյն տեխնոլոգիաների և այլ) ու դրանց առանձնահատկությունների վերաբերյալ: Դասընթացի ավարտին սովորողները պետք է հանձնեն քննություն Նախարարության պատրաստած քննական թերթիկներով, որը հիմք կհանդիսանա Կազմակերպության կողմից իրականացված աշխատանքների ընդունման կամ մերժման համար: Դասընթացների	Ապահովել դասընթացների տեսաձայնագրումը:			

		ավարտից հետո մասնակիցներին տրամադրվում են հավաստագրեր: Դասընթացները իրականացվելու են լսարանային պայմաններում՝ հագեցած սովորողների թվին համապատասխան համակարգիչներով և այլ անհրաժեշտ տեխնիկայով: Դրամաշնորհը տրամադրվելու է ըստ դասընթացների մասնակիցների թվի: Յուրաքանչյուր մասնակցի համար դրամաշնորհի առավելագույն գումարը չի կարող գերազանցել 100 հազար ՀՀ դրամը:				

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,

ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011031912

ՀՎՀՀ 02565518

Գլխավոր քարտուղար՝

Դավիթ Գասպարյան

(ստորագրություն)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Բութքամփ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երեւան, Դավթաշեն 2թ. 47, բն. 2

ՀՎՀՀ 00238961

Հ/հ 1570073681500100

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Նարեկ Ասլիկյան

(ստորագրություն)

Հավելված 2
27.05.2024-ին
կնքված ԲՏԱՆ-ԴՄ-2024/02 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____
1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն
2.1 Թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Նշել պայմանագրի գործողության ընթացքում մշակված նյութերի համացանցում տեղադրման ենթակա՝ (առկայության դեպքում օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն) նյութերը

2.3 Ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում կանխատեսվող ռիսկերը, որոնք կարող են խոչընդոտել ծրագրի պատշաճ իրականացմանը, ինչպես նաև դրանց հաղթահարման հնարավոր տարբերակները:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,

ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011031912

ՀՎՀՀ 02565518

Գլխավոր քարտուղար՝

Դավիթ Գասպարյան

(ստորագրություն)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Բութքամփ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 2թ. 47, բն. 2

ՀՎՀՀ 00238961

Հ/հ 1570073681500100

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Նարեկ Ասլիկյան

(ստորագրություն)

Հավելված 3
27.05.2024-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/02 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Վճարման ժամանակահատված	Ըստ պայմանագրի գնի
1.	Կազմակերպության հետ դրամաշնորհային պայմանագիր կնքելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում	30%
2.	Պայմանագրով նախատեսված արդյունքը Կազմակերպությունից ընդունելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:	70%

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011031912
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝
Դավիթ Գասպարյան

(ստորագրություն)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Բութքամփ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 2թ. 47, բն. 2
ՀՎՀՀ 00238961
Հ/հ 1570073681500100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Տնօրեն՝ Նարեկ Ասլիկյան

(ստորագրություն)

Հավելված 4
27.05.2024-ին
կնքված N **ԲՏԱՆ-ԴՄ-2024/02** պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Բութքամփ» ՍՊԸ
գտնվելու վայրը՝ Հակոբ հակոբյան 3
հհ՝ 1570073681500100
հվհհ՝ 00238961

Նախարարություն
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝_____
Նախարարությունը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	Արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	Փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշվետվությունը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում է:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 5
27.05.2024-ին
կնքված N **ԲՏԱՆ-ԴՄ-2024/02** պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«ԲՈՒԹՔԱՄՓ» ՍՊԸ-ն պլանավորում է իրականացնել միջոցառումների հետևյալ քայլերը նշված ժամանակահատվածում՝ ծրագրում ներգրավելով 300 մասնակից երեք մարզերից՝ Գեղարքունիք, Վայոց ձոր և Սյունիք:

Մարզ	Քաղաք	Խմբի համար	Ուսանողների քանակ	Մեկնարկի ամսաթիվ	Ավարտի ամսաթիվ	Դասախոս	Անցկացման վայր
Գեղարքունիք	Սևան	1	20	6/14/2024	7/29/2024	Անդրանիկ Խանդանյան	Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց, Թումո բոքս
Գեղարքունիք	Սևան	2	20	6/14/2024	7/29/2024	Անդրանիկ Խանդանյան	Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց, Թումո բոքս
Գեղարքունիք	Մարտունի	3	20	7/15/2024	8/29/2024	Էլմիրա Ավագյան	Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց
Գեղարքունիք	Մարտունի	4	20	7/15/2024	8/29/2024	Էլմիրա Ավագյան	Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց
Գեղարքունիք	Գավառ	5	20	8/15/2024	9/29/2024	Միեր Խաչատրյան	Գավառի ակ. Ա. Թամամշեվի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ, Թումո բոքս
Գեղարքունիք	Գավառ	6	20	8/15/2024	9/29/2024	Միեր Խաչատրյան	Գավառի ակ. Ա. Թամամշեվի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ, Թումո բոքս
Սյունիք	Սիսիան	7	20	7/1/2024	8/15/2024	Գեղամ Ջիվանյան	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղ
Սյունիք	Կապան	8	20	7/15/2024	8/29/2024	Մերուժան Մարտիրոսյան	Թումո բոքս, Կապանի N2 ավագ դպրոց

Սյունիք	Կապան	9	20	7/15/2024	8/29/2024	Մերուժան Մարտիրոսյան	Թումո բոքս, Կապանի N2 ավագ դպրոց
Սյունիք	Գորիս	10	20	7/1/2024	8/15/2024	Գեղամ Ջիվանյան	Գորիսի N1 ավագ դպրոց
Սյունիք	Գորիս	11	20	7/1/2024	8/15/2024	Արմեն Գևորգյան	Գորիսի N1 ավագ դպրոց
Վայոց ձոր	Վայք	12	20	7/1/2024	8/15/2024	Սաթենիկ Կարապետյան	Թումո բոքս
Վայոց ձոր	Վայք	13	20	7/1/2024	8/15/2024	Սաթենիկ Կարապետյան	Թումո բոքս
Վայոց ձոր	Եղեգնաձոր	14	20	8/15/2024	9/29/2024	Հովհաննես Քոչարյան	Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ
Վայոց ձոր	Եղեգնաձոր	15	20	8/15/2024	9/29/2024	Հովհաննես Քոչարյան	Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ

Դասընթացի կրթական ծրագիր՝

INTRODUCTION TO FRONTEND BASICS

- Introduction to frontend development
- HTML basics
- CSS basics
- Differences between frontend and backend development

ADVANCED FRONTEND DEVELOPMENT

- Intermediate HTML and CSS
- Introduction to JavaScript
- DOM manipulation
- Introduction to Responsive Design

INTRODUCTION TO BACKEND DEVELOPMENT

- Overview of backend development
- Introduction to server-side programming
- Introduction to databases (SQL vs. NoSQL)
- Basics of server-side scripting with Python or other backend language

PYTHON BASICS (OR OTHER BACKEND LANGUAGE)

- Introduction to Python programming language
- Variables, data types, and operators
- Control structures (if statements, loops)
- Functions and modules

DESIGN TOOLS BASICS

- Introduction to design tools like Adobe Photoshop or Figma
- Understanding design principles
- Basic design exercises and projects

INTRODUCTION TO MACHINE LEARNING

- Introduction to Math in ML
- Overview of machine learning
- Supervised learning, unsupervised learning, and reinforcement learning
- Basic concepts of machine learning models
- Introduction to popular machine learning libraries in Python (e.g., PyTorch, Pandas etc.)

INTRODUCTION TO DEVOPS

- Overview of DevOps
- Understanding the software development lifecycle
- Introduction to version control with Git
- Basics of continuous integration and continuous deployment (CI/CD)

ADDITIONAL TOPICS AND PROJECT

- Recap of all topics covered

- Introduction to information security
- Introduction to blockchain
- Introduction Hardware & robotics
- Introduction to cloud services like AWS or Azure
- Final project assignment integrating concepts learned throughout the course

Դասընթացի տևողություն՝ 6 շաբաթ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011031912
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝
Դավիթ Գասպարյան

(ստորագրություն)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Բութքամփ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երեւան, Դավթաշեն 2թ. 47,
բն. 2
ՀՎՀՀ 00238961
Հ/h 1570073681500100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Տնօրեն՝ Նարեկ Ասլիկյան

(ստորագրություն)

Հավելված 6
27.05.2024-ին
կնքված **ԲՏԱՆ-ԴՄ-2024/02** պայմանագրի

2023 թվականի եկամուտների և ծախսերի մասին (Ներկայացնել կատարողական ամփոփիչ հաշվետվության ժամանակ՝ կցելով հավաստող փաստաթղթերը)				
Հ/հ	**Ցուցանիշների անվանում**		**Ընդամենը**	
I	**Եկամուտներ՝**	**0.0**	**0.0**	
	այդ թվում՝			
-	Հիմնական գործունեությունից		**0.0**	
-	Այլ եկամուտ (պետական բյուջեից)		**0.0**	
II	**Ծախսեր՝**	**0.0**	**0.0**	
	այդ թվում՝			
1	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ		0.0	
2	Հումք, նյութեր, պահեստամասեր		0.0	
3	Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ		0.0	
4	Վարձակալական ծառայության		0.0	
5	Գործուղման ծախսեր		0.0	
6	Կապի ծառայություններ		0.0	
7	Այլ կազմակերպությունների և անձանց կողմից կատարված աշխատանքների և ծառայությունների վճարներ, այդ թվում		0.0	
8	Բանկային ծառայություններ		0.0	
9	Գրասենյակային ծախսեր		0.0	
10	Կոմունալ ոլորտի ծախսեր		0.0	
11	Այլ ծախսեր		0.0	
III	**Շահույթ (վնաս)**	**0.0**	**0.0**	
IV	**Միավոր ծառայության ինքնարժեք**	**0.0**	**0.0**	
IV	**Ընդամենը**	**0.0**	**0.0**	

Ձևաչափ 1

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Սեռ	ՀՇՀ տվյալներ	Գրանցման հասցե	Հեռ.	Էլ. փոստ	Կրթություն/ ուսումնական հաստատության անվանում	Աշխատավայր	Դասընթացին դիմելու ամսաթիվ	Դասընթացի սկիզբ	Դասընթացի ավարտ	Այլ նշումներ
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												